

է երկիր, թերևս պիտի դադրէին զայն մաս մաս բաժնել: Խաղաղութիւնն պիտի տիրէր յաշխարհի, ընկերական հարստութիւնն պիտի յաջորդէր կործանիչ ամօճալի և ամբարշտ գինուորական յիմարութեան, քաղաքական բաժանմունք պիտի քնուկէին, և մարդիկ այն ատեն միայն պիտի կարենային բարձրանալ քաղաքաբար յուսումն տիեզերաց՝ մասնաշաղով իսկապէս բնութիւնը, և ազրիչ նաւարական կենաց գուարճութեամբ: Աւաղ. դեռ ևս այդչափի չեմք հասած. յուսանկարչական աչքն երկնային անասման խորհուրդներ պիտի յայտնէ՝ յուսալ քան մարդկային աչաց զիրան տեսնելը, և նախ քան զհասաստել զիտութեան իւր թագաւորութիւնը՝ այս մեր փորձիկ թաւալլոր բոլորակին վերայ:



ՕՐԱՅԻՆ ՆԱԻՎԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ



ԿԱՒԻՏՈՒՆԻՈՅ Ս. Փրանկիսկոսի (S. Francisco) մէջ ամէն կողմ կը խօսուի օղային նաւու մի վրայ, որ մեկնելով անկից՝ դէպ ի վեր բարձրացեր է, առանց գիտցուելու թէ ո՞ր պիտի գնայ: Հարիւրաւոր ականաւ տես վկայք կը հաստատեն որ տեսեր են նաւը իրենց տանիքներուն վրայէն անցնելով, և մերձակայ գաւառներէ ալ տեղեկութիւնն հասեր է՝ թէ տեսեր են այդ խորհրդաւոր նաւը՝ որ զարմանալի արագութեամբ օդը կտրելով կ'անցնէր:

Իսկ Սակրամէնոյ կղզիէն լուր եկած է՝ թէ հազարաւոր մարդիկ տեսեր են այդ նաւը, բայց այնքան բարձր ելած է՝ որ ոչ ոք կրցած է նկարագիր մը տալ անոր կազմակերպութեան:

Փիւսը հնարողին անունն դեռ յայտնի չէ, բայց նորա ներկայացուցիչն է Գէորգ Կոլէնս փաստաբանն, որ կը յայտարարէ՝ թէ իւր պաշտպանեալն պիտի չի յայտնէ ոչ իւր անունը և ոչ ալ նաւին կազմութեան մանրամասնութիւնները, մինչև որ բոլորովին ապահով չլինի իւր այս նոր գիւտին անվրէպ կերպով յաջողութեամբ վրայ: Վերջիչեալ փաստաբանն ըսած է միայն, որ իւր պաշտպանեալն Մէյն գաւառէն է՝ միլիոններու տէր անձնաւորութիւն մի, որ երկար տարիներէ ի վեր հետամուտ եղած է օդային նաւ

կազմացութեան խնդրոյն, կէտ միլիոնէն աւելի փորձերու համար միայն ծախք ընելով. և թէ արդէն Վաշինգտոնի տէրութեան խնդրագիր տուեր է ասանձնա շնորհաբիւն (patente) ընդունելու համար, բայց քանի մը վճարական կէտերու մասին՝ այս վերջին փորձն ալ պահանջուեր է, ուսկից կախումն ունի գաւառյն յաջողումն: Փաստաբանին վեր ի վերոյ խօսքերուն նայելով՝ այս նաւս կազմուած է մետաղէ և կարող է 15 անձինք իւր մէջ ընդունել: Երկու թևնակներէ յառաջ կը մղուի, այնպիսի մեքենականութեամբ՝ որ նմանողութիւն է թռչնոց թևերուն, ունենալով նաև շարժական պոչ մի՝ ղեկի տեղ ծառայելու համար:

Հասարակաց աչքէն հեռու՝ առանձինն տեղույ մէջ՝ նախընթացաբար զանազան փորձեր եղած են, որոց ներկայ գտնուեր է վերջիչեալ փաստաբանն, որ կը վկայէ թէ սքանչելի կերպով յաջողեր են այդ փորձերը, այնպէս որ նաւապարը կարող եղած է նաւուն ո՞ր և իցէ փափաքելի շարժումն տալ՝ թէ՛ բարձրանալու, թէ՛ ցածնալու և թէ՛ ետևառաջ գնալու:

Կը սպասենք ուրեմն այս փորձին վերջնական արդիւնքին, փափաքելով տեսնել աւմենագոժտարանի տաւայրկներէն միոյն ալ լուծումն իրագործուած, առանց բանադատուելու ուրիշ անպաւնելու նման՝ այն ցանկին մէջ անցընել նաև խորհրդաւոր հնարողին անունը, ուր դրոյմուած են այնպիսիք՝ որոնք գահավիժելով՝ զոհ եղած են իրենց բարձրացած գիւտին հասնելու փորձերով: ***



ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐՋԸ

Երբեմն երբեմն՝ մինչդեռ ամենևին չենք յուսար՝ ընկերութեան մէջ կը ծագին, իբրև յանկարծաբար սուռկեր յետ անձրևներու՝ այնպիսի անձինք, որք կամ իրենց գրքպանաց մէջ արծաթոյ քանակ մի հաւաքելու նպատակաւ, և կամ իրենց ուղղալային դրութեան և տգիտական կարծեաց ցուցահանդէս մի պարգեւու համար՝ ուսմիկ հասարակութեան առջև, կը քարոզեն մեծածայր դէպ ի չորս կողմանս երկրի՝ թէ աշխարհէս վերջը վերահաս է: Խեղճ ժողովորդն այդպիսի սնտիախօսից հաւատք ընծայելով՝ զուր տեղ էր խռովի և ինքզինքն աշուղտի խուճապներու կ'ենթարկէ:

Այս, հաւատքի մասն է և գիտութեան ալ համաձայն վարդապետութիւն է, թէ օր